

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕХЕГНУТИ ГՅՈՒՊԵՏԱՐԱՆ

գ. Եղեգնուտ հեռ. 093 18 76 56

թիվ 6

« 26 » Հունվարի 2015թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ԳԱՀՐԱՄՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ՝

Եղեգնուտի գյուղապետարանը ներկայացնում է Եղեգնուտի համայնքի համայնքի ըդհանուր ժողովի 2015 թվականի հունվարի 23-ի նիստի թիվ 2 և 3 արձանագրությունները՝ Եղեգնուտ համայնքի ղեկավարի 2014 թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան կատարած աշխատանքների հաշվետվությունը հաստատելու մասին:

Առդիր՝ 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ



Արձանագրություն թիվ 2

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի
 գ. Եղեգնուտ կայացած՝ 23.01.2014թ. ժամը 14⁰⁰ – ին:

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի
 քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 63 անդամներ:
 Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանը,
 ավագանու անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի Աշխատակազմը:

Օրակարգում.- Եղեգնուտի համայնքի ղեկավարի 2014 թվականի երկրորդ կիսամյակի
 հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:
 Զեկ. Ռ. Մարգարյան (համայնքի ղեկավար)

Համայնքի ղեկավար Ռազմիկ Մարգարյանը ներկայացրեց 2014թվականի երկրորդ
 կիսամյակում կատարած իր աշխատանքների մասին, մասնավորապես նշելով
 2014թվականի երկրորդ կիսամյակում համայնքային բյուջեի արդյունքները, ինչպես
 մուտքային, այնպես էլ ծախսային մասով:

Այսպես՝ 01.07.2014.– 31.12.2014թվականը ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե
 մուտքագրվել է 21729.2 հազ. դրամ, որը կազմում է 110.8%, իսկ ծախսային մասը կազմում
 է 25440.1 հազ.դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 95 % - ը:

Մուտքագրվել է՝

	պլան	փաստացի / հազ. դրամ/	կատ. / %/
1. հողի հարկ	3532.5	4445.9	125.8
2. գույքահարկ իրավաբանական անձանցից	300.0	414.5	138.1
3. գույքահարկ ֆիզիկական անձանցից	620.0	832.6	134.2
4. հողի վարձավճար	1300.0	2149.6	165.3
5. այլ ոչ հարկային եկամուտներ	300.0	364.8	121.6
6. պետական բյուջեից ստացվել է դոտացիա	113483.1	13483.0	100.0
7. սուբվենցիա	0	-	-
8. տեղական տուրքեր	68.0	38.7	56.9
ԸՆԴԱՄԵՆԸ՝	19603.6	21729.2	110.8

Այսպիսով բյուջեի կատարողականը կազմում է 110.8% :

Վճարվել է.

	/հազար դրամ/
1. աշխատավարձ	7610.4
2. գրասենյակային և գրենական ապրանքներ	260.0
3. օգն. սոց. անապ. ընտանիքներին	1495.0
4. էլեկտրական էներգիայի վճարը	921.0
5. մշակույթային ծառայություններ	840.0
6. տեղեկատվական ծառայություն	90.0
7. տրանսպորտային նյութեր	600.0
8. համակարգչային սպասարկում մասնագ. ծառայություն	160.8
9. ներքին գործուղումներ	54.4
10. վարչական սարքավորումներ	1681.7
11. կապի ծառայություններ	222.4
12. խ/մ ջրի պոմպի ջրագծերի և խորքային հորի վերանորոգում	3200.0

13. փողոցների լուսավորության անցկացում	3454.0
14. ճանապարհների վերանորոգում	948.0
15. մանկապարտեզի գույքի ձեռք բերում	1681.7
16. սուբսիդիա մանկապարտեզին	1080.0
17. տրանսպորտային սարքավորումներ ԸՆԴԱՍԵՆԸ՝	1140.7 25440.1

Համայնքի ղեկավարը նշեց, որ իրենց հարկային պարտավորություններում բերանում են հատկապես իրավաբանական անձինք:

Նշվեց նաև, որ համայնքում լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. կատարվել է շուրջ 1681700 դրամի մանկապարտեզի նոր գույքի ձեռքբերում,
2. կատարվել է համայնքի փողոցների լուսավորության մասնակի անցկացում:

Արտահատվեցին – Կ. Սիմոնյանը / Աշխատակազմի գլխ. մասնագետ/,
 Է. Աբրահամյանը / ավագանի/, Կ. Մարգարյանը / ավագանի /,
 Ե. Կարապետյանը / սեփականատեր /, Լ. Գևորգյանը / սեփականատեր/:

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

ո ղ ո շ ու մ է՝

1. Հաստատել Համայնքի ղեկավարի 2014 թվականի երկրորդ կիսամյակի կատարած աշխատանքների հաշվետվությունը և Համայնքի ղեկավարի 2014 թվականի երկրորդ կիսամյակի կատարած աշխատանքները գնահատել բավարար:
- 2 Առաջարկել համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանին և Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Կ. Սիմոնյանին՝
 - 1) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը հողի հարկի, գույքահարկի և հողի վարձավճարների մասով, ըստ կիսամյակների 100% - ով:
 - 2) ֆիզիկական անձանցից գանձումները հողի հարկի, վարձավճարների և գույքահարկի մասով ապահովել 100% - ով:

Նախագահ

Արձանագրող



Ռ. Մարգարյան

Ս. Ալեքսանյան

Արձանագրություն թիվ 3

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի
կայացած՝ 23.01.2014թ. ժամը 14⁰⁰ – ին
գ. Եղեգնուտ

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի
քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 63 անդամներ:
Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Գ. Հարությունյանը,
ավագանու անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի Աշխատակազմը:

Օրակարգում.- Եղեգնուտի համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան
հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:
Ձեկ. Ռ. Մարգարյան (համայնքի ղեկավար)

Համայնքի ղեկավար Ռազմիկ Մարգարյանը ներկայացրեց 2014թվականի տարեկան
հաշվետվությունը կատարած իր աշխատանքների մասին, մասնավորապես նշելով
2014թվականի երկրորդ կիսամյակում համայնքային բյուջեի արդյունքները, ինչպես
մուտքային, այնպես էլ ծախսային մասով:

Այսպես՝ 01.01.2014.– 31.12.2014թվականը ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե
մուտքագրվել է 37701.7. հազ. դրամ, որը կազմում է 102.2%, իսկ ծախսային մասը
կազմում է 40673.1 հազ.դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 78.5 % - ը:

Մուտքագրվել է՝

	պլան	փաստացի / հազ. դրամ/	կատ. / %/
1. հողի հարկ	5065.0	5244.8	103.5
2. գույքահարկ իրավաբանական անձանցից	600.0	528.0	88.4
3. գույքահարկ ֆիզիկական անձանցից	1500.0	1986.1	132.4
4. հողի վարձավճար	2200.0	2488.0	113.1
5. այլ ոչ հարկային եկամուտներ	500.0	450.1	90
6. պետական բյուջեից ստացվել է դոտացիա	26966.2	26966.0	100.0
7. սուբվենցիա	0	-	-
8. տեղական տուրքեր	68.0	38.7	56.9
ԸՆԴԱՄԵՆԸ՝	36899.2	37701.7	102.2

Այսպիսով բյուջեի կատարողականը կազմում է 102.2% :

Վճարվել է.

	/հազար դրամ/
1. աշխատավարձ	13469.9
2. գրասենյակային և գրենական ապրանքներ	500.0
3. օգն. սոց. անապ. ընտանիքներին	1965.0
4. էլեկտրական էներգիաի վճարը	1916.0
5. մշակույթային ծառայություններ	870,0
6. տեղեկատվական ծառայություն	186,0
7. տրանսպորտային նյութեր	1350.0
8. համակարգչային սպասարկում մասնագ. ծառայություն	160,4
9. ներքին գործուղումներ	54,4
10. վարչական սարքավորումներ	1941.3
11. կապի ծառայություններ	500,0
12. խ/մ ջրի պոմպի ջրագծերի և խորքային հորի վերանորոգում	5191,7

13. փողոցների լուսավորության անցկացում	3454.0
14. ճանապարհների վերանորոգում	948.0
15. մանկապարտեզի գույքի ձեռք բերում	1681.7
16. սուբսիդիա մանկապարտեզին	1080.0
17. տրանսպորտային սարքավորումներ	4660.7
18. հատուկ նպատակային այլ նյութեր	400.0
19. ապահովագրական ծախսեր	32.0
20. մասնագիտական ծառայություններ	312.0
ԸՆԴԱՍԵՆԸ՝	40673.1

որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 78.5 % - ը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ իրենց հարկային պարտավորություններում թերանում են հատկապես իրավաբանական անձինք:

Նշվեց նաև, որ համայնքում լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. Հորատվել է մեկ խորքային հոր, վերականգնվել են երկու խորքային հորեր, մեկը՝ ոռոգման համար և մյուսը՝ խմելաջրի համար:
 2. Գյուղապետարանի համար ձեռք են բերվել նոր տեղեկատվական սարքավորումներ և գույք:
 3. Լուծվել է համայնքի այգու ոռոգման ջրի հարցը:
 4. Մանկապարտեզի համար դրամի ձեռք է բերվել 1681700 դրամի նոր գույք և էլեկտրական սարքավորումներ:
 5. Կատարվել է համայնքի փողոցների լուսավորության մասնակի անցկացում:
 6. Համայնքի համար լիզինգով ձեռք է բերվել անվավոր տրակտոր USQ-82, աղբահանության և այլ աշխատանքներ կատարելու համար:
- Համայնքի ղեկավարը նշեց նաև, որ համայնքում առկա են հետևյալ խնդիրները՝
1. Հուշարձանի վերանորոգում և շրջակայքի բարեկարգում:
 2. Գյուղի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատուր, հետագայում նաև մնացած փողոցները՝ մաս-մաս:
 3. Սկսել մանկապարտեզի բնականոն աշխատանքը:
 4. Վերանորոգել նաև մանկապարտեզի մյուս մասնաշենքը:
 5. Անցկացնել լուսավորություն նաև համայնքի 3,5,7 և 9-րդ փողոցներում:
 6. Շարունակել գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման աշխատանքները:
 7. Հովանավորների և համայնքի բյուջեի միջոցներով կատարել համայնքի խմելու ջրագծերի հիմնովին վերանորոգում:
 8. Օգնել, օժանդակել և պայքարել, որ լուծվի համայնքի հողերի ոռոգման ջրի հարցը:
 9. Լուծել գերեզմանոցի խմելու ջրի հարցը և վերանորոգել ցանկապատը:

Արտահատվեցին – Վ. Սիմոնյանը / Աշխատակազմի գլխ. մասնագետ/,
 Է. Աբրահամյանը / ավագանի/, Վ. Մարգարյանը / ավագանի /,
 Ս. Կարապետյանը / ավագանի /, Ե. Կարապետյանը / սեփականատեր /,

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

ո ղ ո ղ ու մ է՝

1. Հաստատել համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը և համայնքի ղեկավարի 2014 թվականի կատարած աշխատանքները գնահատել դրական:

2. Առաջարկել համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանին և Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Վ. Սիմոնյանին՝
- 1) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը հողի հարկի, գույքահարկի և հողի վարձավճարների մասով, ըստ կիսամյակների 100% - ով:
 - 2) 2015 թվականին անել ամեն ինչ, որ ֆիզիկական անձանցիք կարողանան հողի հարկի, վարձավճարների և գույքահարկի մասով վճարումները կատարեն 100% - ով:

Նախագահ



Արձանագրող

Ռ. Մարգարյան

Ս. Ալեքսանյան